

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՍՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հ. Ս. ԶԱՔՈՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

գործ պրոֆեսոր

Ն. Ռ. ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

գործ ասիստենտ

1991թ-ին քաղաքական անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունում զարգացման հիմնական նպատակակետեր են ընտրված ժողովրդավարական հարաբերությունների հաստատումն ու շուկայական տնտեսության արմատավորումը: Այդ նոր հարաբերություններին անցումը ոչ թե նորաձևությանը հետևելու դրսնորում էր, այլ քաղաքացիների ազատության սահմաններն ու ստեղծագործ աշխատանքով զբաղվելու հնարավորություններն ընդլայնելու գործնքաց, որը պետք է նպաստեր բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Հայտնի են շուկայական հարաբերությունների առավելությունները տնտեսվարման արդյունավետությունը բարձրացնելու և մարդկային ստեղծագործական ներուժը բացահայտելու առումով: Սակայն կարծել, թե այդ հարաբերությունները ի զրոյու են ցանկացած իրավիճակում հարթել տնտեսական վերելքի ճանապարհը և ապահովել բնակչության կենսամակարդակի բարձրացում՝ առանց համապատասխան միջամտության ու նպաստավոր միջավայր ձևավորելու, կնշանակի գերազանահատել դրանց դերը:

Որևէ միջավայրում, առանց մեծ կորուստների, նոր հարաբերություններ արմատավորելու նպատակով հարկավոր է մանրամասնորեն հաշվի առնել տվյալ միջավայրի բոլոր առանձնահատկությունները, հակառակ պարագայում հետքնքացն ու ձախողումները անխուսափելի են դառնում:

Քենց այդ մասին են վկայում վերջին քսան տարիներին Հայաստանի Հանրապետությունում ի հայտ եկած բազում տնտեսական ու սոցիալական խնդիրները, որոնց մեջ ամենահրատապ լուծում պահանջողներից ենք համարում աշխատանքի շուկային վերաբերվողները, քանի որ դրանք լուրջ սպառնալիք են դարձել ոչ միայն տնտեսական ու սոցիալական ոլորտների, այև ժողովրդագրական իրավիճակի և, նույնիսկ, ազգային անվտանգության համար:

Սույն հոդվածում կանդրադաշնանք աշխատանքի շուկայում առկա բազմաթիվ խնդիրներից հետևյալ երկուսին՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների հիմնական մասի անորոշ ու հակասություններով լեցուն իրավական կարգավիճակին և մասնագիտական բարձրագույն որակավորում պահանջող աշխատատեղերից շատերում առաջարկվող ցածր աշխատավարձերին:

Իհարկե, խորհրդային մտածելակերպ և ապրելու մշակույթ ունեցող երկրում շուկայական հարաբերությունների առավելությունների ներդրումն առանց բարդությունների ընթանալ չէր կարող: Բարդությունների մի մասը պայմանավորված է պահանջման տնտեսության յուրահատկությունների հետ ազդեցություններով, մյուս մասը՝ նոր ձևավորված քաղաքական, տնտեսական և սոցիալական գոր-

Ծոններով:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) հրապարակած տվյալների՝ 2006-2010 թվականների ընթացքում ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը տատանվել է 1170.8 - 1192.5 հազ-ի միջակայքում, այդ թվում զբաղվածներինը՝ 1101.5-1117.6 հազ-ի, իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկներինը՝ 74.9-88.9 հազ-ի միջակայքերում, այսինքն՝ գործազրկության մակարդակը այդ ժամանակահատվածում տատանվել է 6-8 տոկոսի միջակայքում:

Զբաղվածների բաշխվածությունը, ըստ ոլորտների, ներկայացնենք այսուսկի տեսքով:

**ՀՀ-ում զբաղվածները ըստ տնտեսության ոլորտների՝ 2006-2010 թվականներին¹
(միջին տարեկան)**

Զբաղվածության ոլորտներ	Զբաղվածներ, 1000 մարդ					Ցուցանին նկատմամբ, %				
	2006	2007	2008	2009	2010 ²	2006	2007	2008	2009	2010
Գյուղատնտեսական ոլորտ	504.5	506.9	493.5	496.5	500.9	46.2	46.0	44.2	45.6	45.3
Խ. գյուղատնտեսական ոլորտ	587.9	594.6	624.1	592.9	603.9	53.8	54.0	55.8	54.4	54.7
որից՝										
Արդյունաբերություն	140.9	135.0	127.6	115.1	111.8	12.9	12.3	11.4	10.6	10.1
Հինարարություն	29.7	31.1	60.4	49.5	56.3	2.7	2.8	5.4	4.5	5.1
Ծառայություններ	417.3	428.5	436.0	428.2	435.8	38.2	38.9	39.0	39.3	39.4
այդ թվում՝										
Տրանսպորտ և կապ	48.6	47.6	51.6	53.8	55.0	4.4	4.3	4.6	4.9	5.0
Ֆինանսական գործունեություն	6.6	8.9	10.6	11.0	11.7	0.6	0.8	1.0	1.0	1.1
Կորուրյուն	100.8	101.3	100.9	100.6	103.1	9.2	9.2	9.0	9.2	9.3
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մասնաւում	48.8	50.2	44.5	45.7	42.7	4.6	4.6	4.0	4.2	3.9
Այլ	212.5	220.6	228.3	217.2	223.3	19.5	20.0	20.4	19.9	20.2
Ընդամենը զբաղվածներ	1092.4	1101.5	1117.6	1089.4	1104.8	100	100	100	100	100

Այսուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ում ամենաշատ զբաղվածներ ունեցող ոլորտը գյուղատնտեսությունն է, որտեղ զբաղվածների տեսակարար կշիռը տատանվում է ընդհանուր զբաղվածների 45 տոկոսի շուրջ։ Մինչդեռ բո-

¹ Սկսած 2010թ-ից սույն ցուցանիշը հաշվարկվում է համաձայն Տնտեսական գործունեության տեսակների նոր՝ երկրորդ վերանայմամբ Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ), որի կիրառման առանձնահատկություններով պայմանավորված, վերահաշվարկվել են 2009թ-ի ցուցանիշները։

² 2011թ-ի ցուցանիշները չեն ներառվել այսուսակում, քանի որ ՀՀ ԱՎԾ կատարած դասակարգման փոփոխությունների պատճառով այդ տարվա տվյալները նախորդ տարիների հետ ոչ ամբողջությամբ են համադրելի։

լոր տիպի ծառայություններում (տրանսպորտ և կապ, ֆինանսական գործունեություն, կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում և այլն) զբաղվածների թիվը միասին չի հասնում նույնիսկ 40 տոկոսի:

Չնայած ՀՀ-ում ոչ մի այլ ոլորտում գյուղատնտեսության չափ զբաղվածներ չկան, սակայն այդ ոլորտում զբաղվածների գործունեությունը գորեք դուրս է մնացել օրենսդրական կանոնակարգման շրջանակներից:

Նախ նշենք, որ ավելի քան տասը տարի գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքով գյուղացիական տնտեսությունը (ձևավորվեցին 1991թ-ից սկսած՝ օրենքով նախատեսված կարգով հողը և գյուղատնտեսական մյուս արտադրանիջոցները սեփականաշնորհելու արդյունքում), որպես կազմակերպա-իրավական տեսակ, նախատեսված չէ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներում նախկին գյուղացիական տնտեսությունները այժմ ներկայացվում են որպես ընտանեկան տնտեսություններ, սակայն նման կազմակերպա-իրավական տեսակ ևս նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գործում են շուրջ 340 հազար գյուղացիական կամ ընտանեկան տնտեսություններ, որոնք հանրապետության գյուղատնտեսական հողերի հիմնական օգտագործողներն են և տնօրինում են վարելահողերի ավելի քան 82, բազմամյա տնկարկների 75 և խոտհարքերի 50 տոկոսը: Այդ տնտեսություններում զբաղվածների աշխատանքային ստաժի հաշվարկնան հստակ մեխանիզմներ չկան, և միայն գյուղատնտեսության ոլորտում աշխատած տարիների համար կենսաթոշակի հավելումներ չեն կատարվելու: Ավելին, նույնիսկ փոքր հողակտորի (մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող հողատարածքի միջին չափը ՀՀ-ում տատանվում է 1,5 հա-ի շուրջ) համասեփականատերերը չեն հաշվառվում որպես գործազուրկ:

Այս անորոշության հետ մեկտեղ գյուղացիական տնտեսություն վարողները ստիպված են լինում իրենց վրա վերցնել նաև իրենց գործունեության հետ կապված բնական աղետների հետևանքով առաջացող ամբողջ ռիսկը և դիմակայել գյուղատնտեսության հետ առնչվող տնտեսվարողների ու հանրային ծառայողների խարդավանքներին:

Արդյո՞ք վերը նկարագրված իրավիճակը ևս չի նպաստում հանրապետության վարելահողերի շուրջ 1/3-ի անմշակ մնալուն:

Ծվեյցարիայում Հայաստանի դեսպան Շառլ Ազնավուրը «Les Nouvelles d'Arménie» ամսագրին տրված իր բացարիկ հարցազրույցում «Ո՞րն է Հայաստանից արտագաղթի գլխավոր պատճառը» հարցին տվել է հետևյալ պատասխանը. «Այնուղի մարդկանց օգնելու համար ոչիմ չի արվում: Ընդհակարակը, մաֆիայի անդամների մասին սարսափելի պատմություններ գիտեմ: Կարողանում են այնպես անել, որ գյուղացին սոված մնա իր հողի վրա: ...Այդպես այլս չի կարող շարունակվել»:³

Ստեղծված իրավիճակը մեղմելու նպատակով պետք է հնարավորություն ընձեռել գյուղատնտեսության ոլորտում զբաղվածներին, ըստ ցանկության, գրանցվել հանապատասխան մարմիններում և որոշակի վճարումների դիմաց ձեռք բերել աշխատանքային ստաժ, իսկ որոշ պահանջներ բավարարելու դեպում նաև հաշվառվել որպես գործազուրկ:

³ www.armtown.com - հրատարակված 2011 թվականի հոկտեմբերի 11-ին:

Աշխատանքի շուկայում մյուս էական խնդիրն ենք համարում մասնագիտական կրթություն և բարձր որակավորում պահանջող աշխատատեղերից շատերում չափազանց ցածր աշխատավարձեր վճարելու օրենքի ընձեռած հնարավորությունը, ինչը բերում է.

● Կաղրային հոսունության երկրի ներսում (աշխատանք ունեցողների զգալի մասը միաժամանակ հանդիսանում է աշխատանք փնտրող, հաճախ աշխատատեղի փոփոխությունը կատարվում է ոչ թե վերընթաց, այլ հորիզոնական՝ համանանան աշխատանք այլ գործատուի մոտ ձեռք բերելու ուղղությանը),

● Կաղրային հոսունության երկրից դուրս՝ նմանատիպ կամ նույնիսկ ավելի ցածրակարգ աշխատանքի դիմաց ավելի բարձր վարձատրության համար,

● հատուցման պայմաններից բխող աշխատանքի նկատմամբ ոչ սրտացավ մոտեցման,

● միաժամանակ մեկից ավելի աշխատանքով զբաղվելու պրակտիկայի տարածման, ինչը մի կողմից ավելացնում է աշխատողների լարվածությունն ու հանգեցնում գերիզնածության, իսկ մյուս կողմից կրծատում պահանջարկը աշխատանքի շուկայում՝ նպաստելով գործազուրկների թվի ավելացմանը:

Մի շարք ոլորտներում (Վճարովի ծառայություններ մատուցող առողջապահական, կրթական կազմակերպություններում և այլն), հնարավոր է ավելի բարձր աշխատավարձեր վճարել, սակայն օրենսդրությունը դա պարտադրված չէ: Այդ կազմակերպություններում միջոցների բաշխնան համամասնությունները հիմնականում նախատեսված է կատարել մասնակցային կառավարման մեխանիզմը գործի դնելով, որի ընձեռած հնարավորություններից ՀՀ քաղաքացիների մեծ մասը հոգեբանորեն պատրաստ չէ օգտվել: Այսինքն՝ այս կամ այն համակարգում քաղաքացիների ազատության ու ինքնուրույնության սահմաններն ընդլայնելով, հաճախ նպաստավոր պայմաններ են ստեղծվում իենց այդ քաղաքացիների շահերին ու հետաքրքրություններին մնացորդային տարբերակով անդրդապանական համար:

Առաջարկվում է օրենսդրություն սահմանել բազային պաշտոնային դրույքաչափեր ոչ միայն քաղաքացիական, հարկային ու մաքսային ծառայողների (հանրապետությունում նվազագույն աշխատավարձը 2012թ-ի համար սահմանված է 32500 դրամ, սակայն քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է 40000 դրամ, իսկ հարկային և մաքսային ծառայողներինը՝ 55000 դրամ), այլև մասնագիտական բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի համար՝ նպաստելով առկա ֆինանսական միջոցների ավելի տրամաբանական բաշխմանը:

THE LABOR MARKET PROBLEMS AND THE WAYS OF THEIR SOLUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

H. S. ZAKOYAN
N. A. TADEVOSYAN

This article touch upon the following two issues related to the labor market of the Republic of Armenia: uncertain legal status of the main part of persons employed in agriculture and low wage offered for most workplaces required high professional qualification.

It is suggested to allow the persons employed in agriculture to register in appropriate state institutions and receive seniority after making some payments, as well as to get the status of unemployment in case of satisfying some requirements.

In order to promote more logical distribution of financial resources, it is suggested to set up **basic salary rate** via legislation not only for civil servants, tax officials and customs officers, but also for workplaces require high professional qualification.

ПРОБЛЕМЫ РЫНКА ТРУДА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Г. С. ЗАКОЯН
Н. А. ТАДЕВОСЯН**

Эта статья затрагивает следующие две проблемы рынка труда Республики Армения: неопределенный юридический статус большинства людей занятых в сельском хозяйстве и низкая зарплата предлагаемая в большинстве рабочих мест требующих высшую профессиональную квалификацию.

Предлагается позволять тем, кто занят в сельском хозяйстве зарегистрироваться в соответствующем государственном учреждении и получать трудовой стаж против определенных платежей, а также получать статус безработного при удовлетворении определенных требований.

А чтобы содействовать более логичному распределению финансовых ресурсов, предлагается законодательством установить базовую официальную ставку заработной платы не только для гражданских, налоговых и таможенных служащих, но и для рабочих мест, требующих высокой профессиональной квалификации.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՏՆՏԵՍՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ն. Ա. ՂՈՒՂՅԱՅՆ
Տնտեսագիտության թեկնածու, դղբենս,
գործադիր պատվավոր
Մ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
«Գարանտ Ինչուրան»
ապահովագրական ՓԲԸ մասնագետ
Գ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
գործադիրաստուրայի և կուրսի ուսանող

Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծությունը շուկայական տնտեսության պայմաններում համարվում է անհրաժեշտություն: Տնտեսական գործունեության վերլուծության արդյունքները կազմակերպության հիմնադիրներին (սեփականատերերին), ղեկավար անձնակազմին և այլ շահագործիո անձանց կարող են տրամադրել ամբողջական և հավաստի ինֆորմացիա կազմակերպության իրավիճակի նախին, միևնույն ժամանակ դառ-